գոմը և դարմանանոցը։ Զարմանք է մոռանալ, որ բոլոր գիւղերի տների սենեակներն իրենց թոնիրներն ունեն, որոնցից մէկն ամեն օր վառւում է։

Սենեակը (օդայ։ Փէրիայում գիւղացիները բնակւում են ընդհանրապէս մութ սենեակներում, որոնց 3—4 արշինանչափ պատերը շինւած են ցեխից, իսկ առաստաղը կազմւում է միմեանց մօտ ձգւած գերաններից, որոնց վրայ ճիւղեր և մանր տախտակներ փռելուց յետոյ, 1/4 գազաչափ հողով ծածկում և յարդախառն ցեխով ծեփում են։ Առաստաղն ամրանում է պատերի և մի կամ երկու կարգ շարւած հաստ սիւների վրայ։

Ընդհանրապէս սենեակները քառակուսի են և կամ երկարաձև, այսինքն երկու պատը երկայն՝ և երկուսը կարճ, մէկ կարճ պատի մէջ բացւում է դուռը, որից քիչ հեռու շինւում է բուխարին կամ օջախը, վառարանի տեղ ծառայելու համար. երբեմն սենեակի դրսի դռան աջ կամ ձախ կողմը յարդախառն ցեխից շաղախւած թախտաձև մի «սաքու» է շինւում, որն ամարանոցի տեղ է ծառայում։

Սենեակի մէջտեղում դրւած թոնրից բարձրացող ծուխը դուրս է գալիս առաստաղի մէջտեղ կամ կողքին բացւած կլոր կամ քառակուսի ծակից. սենեակը բացի երթևեկելու դռնից, ուրիշ որևէ լուսամուտ չունի, այլ դրա փոխարէն կայ երդքի ծակը, որտեղից լոյսը թափանցում է ներս և լուսաւորում մութ սենեակը։

Սենեակներից մինը յատկացրւած է ընդունարանի (հիւրասենեակ), որի յատակը ծածկւած է մի քանի կտոր գորգով կամ թաղիքով. պատի տակ դրւած է ծածկոցով փաթաթւած անկողինն իր պարագաներով, մի անկիւնում բազմած է ղէլանը՝ իր սարք ու կարգով, իսկ դռնակում գըտնւում է ձիթի ճրագը, որ լիշեցնում է նահապետական շրջանը։

Մի այլ սենեակում զետեղւած են տան բոլոր պարագաները. այդպիսի սենեակի պատերի մէկի դիմաց Դու կը